հը շինել տուեց Շիրվանի կոյսի համար։ Բարձր ատամնաւոր պարիսպները շրջապատում են նրան և արքայից արքայի վախից՝ թռչունը իր թեւերով չէ թռչում այդ ամրոցի վրայից, օձը իր փորով չի համարձակւում սողալ նրա պարիսպների տակ։ Այս տեղ փակուած է թագուհին։ Ալեւոր բռնաւորը շինել տուեց այդ ամրոցը նրա համար, որպէս զի հայրենեաց տեսքով կարողանայ ըսփոփել նրան և գրաւել նորա սիրտը։ Այս ամրոցի պատուհանից նա կարող է տեսնել ամբողջ Շիրվանը նրա քաղաքներով, գիւղերով, աւաններով։ Ահա այն տեղ Հովտի մէջ կարելի է տեսնել հին քաղաքը իւր մզկիթներով, բարձր մինարէններով, այգիներով և հին խոների շիրիմներով։ Ահա և այն տեղ դէպի հարաւ բարձրաւանդակի վրայ, շրջապատուած վիթխարի ծառերով, նկարւում է Ս. Ստեփաննոսի վանքը (Սաղիանի) իր խարխուլ գմբէթով. ահա և նորա ստորոտում տարածուող գիւղը իւր այրուած խրճիթներով, ահա և նրան շրջապատող անտառները, դաշտերը, բլրակները . . . իսկ հեռու հեռու, հորիզոնի վրայ նկատւում են ծանօթ լեռնաշղթաները. ահա և կատաղի Փիրսահաթը (գետը), որ մռնչալով, ֆշֆշալով, սարերը կորատելով առաջ է վազում . . . բայց ինչո՞ւ կարօտեալ հայրենիքի տեսքը ճնշում է երիտասարդ կոյսի սիրտը. ինչո՞ւ արցունքը այդպէս առատօրէն վազում է նրա աչքերից . . . բացայայտ է պատասխանը . . . ։

« . . . Ֆիթ դաղի արեւելեան ստորոտում, ժայռի տակ, մի տափարակ բարձրաւանդակի վրայ գտնւում է միայնակ մի գերեզման։ Ժամանակից սեւացած փայտեայ մի խաչ կանգնած է այդ գերեզմանի վրայ։ Հարցրէք անցնող գիւղացուց. ո՞ւմն է այդ միայնակ գերեզմանը, և նա ձեզ կպատասխանէ՝ «Շիրվանի կոյսինը»։

Ֆիդ դաղի ճանապարհի վրայ և ստորոտումն է Դաղա-Գիւնաշ անունով աննշան ուխտատեղին, ուր յաճախում են Զամախեցիք հանդերձ ընտանեօք՝ ամենայն ջերմեռանդութեամբ. իսկ նրանից մօտ և յայտնի ուխտատեղին — սուրբ Ստեփաննոսի վանքը — դալու համար պատճառ են բերում, թէ լութերեանները ասում են՝ ուխտ ու մատաղ չկայ։